Խ. Ս. Հ. Մ. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ԱԲՈՐՏՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խ. Ս. Հ. Միության Առողջժողկոմատի 1936 թվի նոյեմբերի 28-ի հրահանգչական նամակը

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԱԶԵՐՆԵՇՐ

ԲԱԳՈՒ — 1938 Թ.

Խ. Ս. Հ. Մ. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

618.39-089
Ա

# ԱԲՈՐՏՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խ. Ս. Հ. Միության Առողջժողկոմատի 1936 թվի նոյեմբերի 28-ի հրահանգչական նամակը

A 4225

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԱԶԵՐՆԵՇՐ

ԲԱՔՈՒ — 1938 Թ.

*Միութենական հանրապետությունների Առողջապահության ժողովրդական կոմիսարներին, Ա.Խ.Ս.Հ. Առողջապահության ժողովրդական կոմիսարներին, երկրային և մարզային առողջապահական բաժինների վարիչներին։*

# ԱԲՈՐՏՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Խ.Ս.Հ. Միության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը սույն թվի նոյեմբերի 22-ին հաստատեց ստորև բերվող* «Հղիության արհեստական ընդհատման (աբորտի) թույլտվության կարգի մասին կանոնադրությունը—ըստ բժշկական ցուցմունքների»։

*Առաջարկում եմ այդ կանոնադրությունն ընդունել անմիջական ղեկավարության և այն կյանքում կիրառելու համար շտապ կենսագործել հետևյալ միջոցառումները.*

1. *Երեք օրվա ընթացքում կազմել և ուղարկել ԽՍՀ Միության Առողջժողկոմատին ի հաստատություն՝ այն շրջանային կենտրոնների ցուցակները, որտեղ պետք է կազմակերպվեն աբորտները թույլատրող բժշկական հանձնաժողովներ։*

*Բժշկական հանձնաժողովների ստեղծումը պետք է նշել այնպես, որպեսզի մեկ հանձնաժողովն սպասարկի միջին հաշվով երկու-երեք վարչական շրջան ըստ տերիտորիայի և ազգաբնակության, ըստ որում հանձնաժողովի տեղը պետք է ընտրվի մի այնպիսի*

շրջանային կենտրոնը, վորտեղ կան փորձված բժըշ-կական ուժեր:

2. Վերանայել և հաստատել ներկայումս գործող քաղաքային և շրջանային բժշկական հանձնաժողով-ների անձնակազմը, համաձայնեցնելով այն Կանոնա-դրության յերկրորդ կետի հետ:

Յերկու մշտական անդամների թվից մեկին հաս-տատել վորպես ղեկավար (նախագահ) և յուրաքան-չյուր անդամին նշել մեկ տեղակալ՝ բացակայության կամ հիվանդության դեպքում:

Քաղաքային Առողջապահական բաժիններին և այն շրջանների շրջանային Առբաժիններին, վորտեղ պետք է գործեն բժշկական հանձնաժողովները, պետք է առաջարկել նախորոք պատրաստելու նաև զանազան մասնագետների ցուցակներն այն հաշվով, վորպեսզի բժշկական հանձնաժողովի յերրորդ անդամը հրավիր-վի հանձնաժողովի Նախագահի կողմից բուն այդ ցու-ցակի:

3. Բոլոր քաղառբաժինները և շրջառբաժինները, վորոնք սպասարկվում են տվյալ բժշկական հանձնա-ժողովի կողմից, պետք է անմիջապես կազմեն յեվ ուղարկեն Հանձնաժողովին իրենց տերիտորիայի հի-վանդանոցների ցուցակը, վորտեղ կարելի յե աբոր-տներ կատարել բժշկական հանձնաժողովի թույլտվու-թյամբ:

4. Միութենական հանրապետությունների Առողջա-պահության ժողկոմատները պետք է 10 որվա ընթաց-քում վերանայեն և հաստատեն աբորտների թույլտվու-թյան կենտրոնական բժշկական հանձնաժողովների

անձնակազմը, որոնք կազմակերպվելու են յուրաքանչյուր շրջանային և մարզային կենտրոնում, ինչպես նաև հանրապետությունների կենտրոններում, որոնք մարզային բաժանում չունեն, համաձայն Կանոնադրության 7-րդ կետի: Դրա համար շրջանային (մարզային) առողջբաժինները և Ինքնավար ԽՍՀ Առժողկոմատները պետք է անմիջապես ներկայացնեն Առժողկոմատներին իրենց թեկնածուներին:

5. Աբորտները թույլատրող բժշկական հանձնաժողովներն անհրաժեշտ է ապահովել ստանդարտ ձևերով (կցվում են)—հիվանդներին ընդունելու ժուռնալներով, աբորտը մերժելու կամ թույլատրելու ակտերով և հաշվետու տեղեկություններով:

Վոչ մի կերպ աբորտները գրանցել հիվանդանոցի ընդհանուր ժուռնալների մեջ, իսկ նրանց հիվանդության պատմությունները առանձնացնել առանձին կարտոտեկայի:

Ամենալուրջ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր թույլատրված աբորտի կամ մերժման թույլտվության իր ժամանակին ու ճիշտ դոկումենտացիայի վրա:

Պարբերաբար ստուգել, թե բժշկական հանձնաժողովների և թե հիվանդանոցների աբորտների կատարման մատյաններն ու փաստաթղթերը:

6. Ինչպես նշված է Կանոնադրության մեջ, աբորտներ կատարելու վճարը սահմանում են դաշնակից հանրապետությունների Առժողկոմատները: Այդ վճարը սահմանելիս պետք է ղեկավարվել օպերացիայի և հիվանդի պահպանման մոտավոր ինքնարժեքով,

յինելով միջին հաշվով 40–50 ռուբլի յուրաքանչյուր ոպերացիայի համար (ներառյալ հիվանդի պահպանությունը) :

Այդ վճարները մուծելու համար պետք է՝ շրջանային առողջբաժնի հատուկ հաշիվ բացել Ֆինբաժնում և պահանջել, որպեսզի հղի կինը, որին թույլատրված է աբորտը, ներկայացնի համապատասխան հիվանդանոցին, բժշկական հանձնաժողովի թույլտվության ակտի հետ միասին, նաև սահմանված վճարի մուծման անդորրագիրը:

Ստացված գումարները պետք է համարվեն որպես հատուկ միջոցներ և օգտագործվեն բժշկական հանձնաժողովի աշխատանքի վճարման ու հղի կանանց բուժսպասարկման և պատրոնաժի, և հատկապես այն հղի կանանց, որոնց աբորտի թույլտվություն չի տրված բարելավման ծախսերի համար:

7. Միջոցներ ձեռք առնել նրա համար, որպեսզի ազգաբնակչությունը լայն կերպով իրազեկ լինի աբորտների թույլտվության կարգի, բժշկական ցուցմունքների խիստ բնույթի, բժշկական հանձնաժողովների վայրի և աշխատանքի ժամանակի մասին:

Տեղամասերի, ամբուլատորիաների և կոնսուլտացիաների բժիշկները չպետք է մերժեն հիվանդ հղի կանանց խնդիրներին իրենց նայելու մասին աբորտի միջնորդության կապակցությամբ, մինչև այն ձևական հիմունքով, որ աբորտի թույլտվությունը կախված է բժշկական հանձնաժողովից: Այդ դեպքերում, ինչպես նշված է կանոնադրության մեջ, տեղամասի կամ ամբուլատորիայի բժիշկը պետք է հիվանդին

ուղարկի համապատասխան բժշկական հանձնաժողովին իր կնքահայտությամբ, նշելով հիվանդության դիագնոզը և այն հաստատող օբյեկտիվ տվյալները:

Սակայն այդ նախնական բժշկական դիտումներից չի կարելի պարտադիր ստուգիչ դարձնել աբորտի քննման գործում — բժշկական հանձնաժողովը չի կարող մերժել հղի կնոջ միջնորդությունը աբորտը թույլատրելու մասին, չնայած որ նա բժշկական նախնական քննության չի անցել:

8. Կանանց կոնսուլտացիաները և նրանց առընթեր գտնվող ստացիոնար–կլինիկական կաբինետներն իրենց հսկողության տակ պետք է վերցնեն ոչ միայն այն կանանց առողջական դրությունը, որոնց թույլատրված է աբորտ անել, այլ և նրանց, որոնց աբորտ անելը մերժվել է: Անհրաժեշտ է այդպիսի կանանց ցույց տալ բժշկական մանրակրկիտ օգնություն և ամեն տեսակի բարոյական օգնություն, որպեսզի թույլ չտալ նրանց ընդհատակյա աբորտմախերներին դիմելու:

9. Մինչև այժմ բժշկական հիմնարկները և բժըշկական աշխատողներն անթույլատրելի կերպով քիչ ուշադրություն են դարձնում իրենց անմիջական պարտականություններին՝ պրոպագանդա և լուսավորչական աշխատանք տանելու այն ուղղությամբ, որպեսզի կանանց մասսայի մեջ արմատացնել աբորտների լուրջ վնասի և հանցագործության համոզմունքը: Բժշկական շատ աշխատողներ էլ անթույլատրելի սառնասրտությամբ են նայում նաև ընդհատակյա աբորտների դեպքերին, որոնց նրանք հանդիպում են

պրակտիկայում — հետևելով խայտառակ կանոնին՝ թե դա «իմ գործը չէ»:

Այդ անտարբերությանն ու պասիվությանը պետք է վերջ դնել:

Սովետները պարտավոր են մշակելու ձեռնարկների բանվորուհիների, կոլտնտեսուհիների, ծառայողների, տնային տնտեսուհիների մեջ տարվող պրոպագանդիստական և բացատրական աշխատանքի մանրամասն պլանը, կազմակերպելով զրույցներ աբորտների վնասի մասին, դասախոսություններ, կինոնկարների ցուցադրում և այլն, այդ գործին ներգրավելով՝ բժիշկներին, մանկաբարձուհիներին, հենվելով հասարակական կազմակերպությունների օգնության վրա:

Բժիշկը, մանկաբարձուհին, իրենց պրակտիկայում, բախվելով ընդհատակյա աբորտի հետ և այդ մասին դատախազությանը չհայտնելու դեպքում պետք է խայտառակվեն հասարակական օրգանների, ընկերական դատարանների և իրենց կոլեկտիվների կողմից:

10. Աբորտների հաշվառումն ու հաշվետվությունը տանել ըստ կցվող ձևերի, որոնք հաստատված են Ժողովրդատնտեսական Հաշվառման Կենտվարչության կողմից, օգտագործելով ստացված տվյալները բժշկական հանձնաժողովների օպերատիվ ղեկավարման համար՝ խստիվ ղեկավարվելով օրենքներով:

ԽՍՀՄ-ի Առողջապահության ժողովրդական
Կոմիսար Գ. ԿԱՄԻՆՍԿԻ
Նոյեմբերի 28. 1936 թ.

## Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Մոսկվա, Կրեմլ; № 2012, 22 նոյեմբերի 1936 թ.

Աբորտների թույլտվության կարգն ըստ բժշկական ցուցմունքների.

*ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է.*

*Հաստատել ԽՍՀ Միության Առողջապահության Ժողովրդական Կոմիսարի կողմից ներկայացված Կանոնադրությունը հղիության արհեստական ընդհատման (աբորտի) ոպերացիայի թույլտվության կարգի մասին՝ ըստ բժշկական ցուցմունքների (տես հավելվածը):*

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ.

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհրդի գործերի կառավարիչ՝

Ի. ՄԻՐՈՇՆԻԿՈՎ.

Հավելված՝ ԽՍՀ Միության Ժողկոմխորհի
1936 թվի նոյեմբերի 22-ի № 2012 վորոշման

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ (ԱԲՈՐՏԻ) ՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ԸՍՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ

*ԽՍՀՄ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 27-ի «Աբորտներն արգելելու մասին» վորոշումը բժշկական աշխատողներից պահանջում ե ամենաճիշտ և բարեխիղճ կատարում:*

*Խորհրդային բժիշկը պետք ե շատ լավ հասկանա, վոր աբորտը վոչ միայն վնասակար ե կնոջ առողջության համար, այլ և հանդիսանում ե սոցիալական լուրջ չարիք, վորի դեմ մղվող պայքարը յուրաքանչյուր գիտակից քաղաքացու և ամենից առաջ, բժշկական աշխատողների պարտքն ե:*

*Բարեխիղճ խորհրդային բժիշկն իր պրակտիկայում չպետք ե թույլ տա ամենափոքր նահանջ հիմնական կանոնից, վորը շարադրված ե ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 27-ի վորոշման մեջ, վոր աբորտն որենքով արգելված ե և թույլատրվում ե վորպես բացառություն միայն այն դեպքերում, յերբ «հղիության շարունակումը վտանգ ե ներկայացնում կյանքին, կամ հղի կնոջ առողջությանը ծանր վնաս ե սպառնում, ինչպես նաև ժա-*

ռանգաբար անցնող ծանր հիվանդությունների առկայության դեպքում»։

Այն հիվանդությունները, վորոնց առկայությամբ թույլատրվում է աբորտների կատարումը, թված են ԽՍՀՄ ի Առողջկոմատի կողմից հաստատված աբորտի մասին բժշկական ցուցմունքներում (կցվում են)։

Այդ ցուցմունքների յուրաքանչյուր կամայական մեկնաբանություն, նրանց յուրաքանչյուր ընդլայնում կատեգորիկ կերպով արգելվում է։ Այն բժշկին, վորը վոչ բավարար խստությամբ ու բարեխղճորեն կկիրառի սահմանված ցուցմունքները, չխոսելով արդեն ուղղակի խախտումների մասին, սպառնում է օրենքով սահմանված քրեական պատիժ։

Այդ կապակցությամբ անհրաժեշտ գտնելով աբորտի թույլտվության կարգի կազմակերպման օրենքի խստիվ պահպանման ապահովումը, ԽՍՀ Միության Առողջկոմատը ի կատարումն ԽՍՀ Միության Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշման սահմանում է ըստ բժշկական ցուցմունքների աբորտների կատարման գործերի քննության և լուծման հետևյալ կանոնները․

1. Ոպերացիայի միջոցով հղիության ընդհատումը (աբորտը) թույլատրվում է բացառապես այն հիվանդությունների առկայությամբ, վորոնք նշված են կցվող բժշկական ցուցմունքներում։

2. Յուրաքանչյուր առանձին դեպքերում այն հիվանդության առկայությունը, վորը հիմք է հանդիսանում աբորտի թույլտվության համար, սահմանում է բժշկական հանձնաժողովը յերեք բժիշկների

կազմով, այդ թվում յերկու մշտական անդամների՝ մանկաբարձ-գինեկոլոգի և ներքնաբուժի և յերրորդի, վորը հրավիրված է հանձնաժողովին մասնակցելու, այն մասնագիտության բժշկի, վորի բնագավառին է վերաբերում սահմանված հիվանդությունը:

Հանձնաժողովի մշտական անդամները նշանակվում են յերկրային (մարզային) առողջբաժինների յեվ հանրապետությունների Առողջապահական ժողկոմատների կողմից, վորոնք չունեն մարզային բաժանմունք, մի տարի ժամանակով:

3. Աբորտների թույլատվության բժշկական հանձնաժողովները կազմակերպվում են կանանց կոնսուլտացիաներին կից յուրաքանչյուր քաղաքում, ինչպես նաև շրջանային կենտրոններում այն ցուցակներով, վորոնք կազմված են միութենական հանրապետությունների Առժողկոմատների կողմից և հաստատված են ԽՍՀՄ-ի Առժողկոմատի կողմից: Շրջանային կենտրոններում, վորոնք չունեն կանանց կոնսուլտացիաներ, հանձնաժողովներն ստեղծվում են շրջանային հիվանդանոցներին կից:

Յուրաքանչյուր հանձնաժողով սպասարկում է իրեն կցված վորոշ շրջան (տերիտորիա):

Ծանոթություն.— Գյուղական տեղամասային բժիշկներն այն դեպքերում, յերբ հիվանդները դիմում են իրենց՝ պահանջելով աբորտ կատարել, այդպիսի հիվանդներին, ըստ բժշկական ցուցմունքների, ուղարկում են բժշկական հանձնաժողովներին, իրենց յեզրակացության հետ միասին, վորտեղ պետք է ցույց տրված լինեն

հիվանդության դիագնոզը և այն հաստատող օբ-յեկտիվ տվյալները:

4. Բժշկական հանձնաժողովը՝ յուրաքանչյուր ապրոր կատարելու զննումը ձեռնարկայցներից վորո-շում դնեք և հանի 5 օրից վոչ ուշ:

5. Այն դեպքերում, յերբ ամբուլատորական կար-գով հնարավոր չէ յեզրակացություն հանել հղի կնոջ հիվանդության բնույթի մասին, ըստ պահմանված ցուցմունքների, հանձնաժողովն իրավունք ունի ու-ղարկելու հիվանդին ստացիոնար՝ ստացիոնարական հետազոտման համար:

6. Առանձին դեպքերում աբորտի անթիվ անհա-տական բժշկական ցուցմունքների առկայությամբ, վորոնք չեն նախատեսված Առժողկոմատի կողմից, վորոնք սակայն անհնարին ծանր կերպով ազդում են հղի կնոջ առողջության, բժշկական հանձնաժողովն իր յեզրակացությամբ հղի կնոջն ուղարկում է կենտ-րոնական հանձնաժողովին:

7. Կենտրոնական հանձնաժողովը կազմակերպ-վում է ոկրուգական բժշկական հանձնաժողովների աշ-խատանքի ղեկավարման համար՝ յերկրային (մար-զային) տարածքներում և հանրապետությունների Առժողկոմատներում, վորոնք չունեն մարզային բա-ժանում, յերեք մասնագետ բժիշկներից՝ Առժողկի փոխիչի կամ Առողջապահության ժողովրդական կո-միսարի անձնական նախագահությամբ: Կենտրոնական հանձնաժողովի կազմը նշանակվում է համապատաս-խան միութենական հանրապետության Առողջապահու-թյան ժողկոմատի կողմից:

8. Աբորտ կատարելու յուրաքանչյուր թույլատվություն պետք է ձևակերպվի հատուկ ակտով՝ նշելով հղի կնոջ անունը, հայրանունը և ազգանունը, տարիքը, հղիության ժամկետը, հիվանդության ճիշտ դիագնոզը (բժշկական ցուցմունքներով սահմանված անվանացանկով), օբյեկտիվ տվյալները, վորոնք հաստատում են դիագնոզը, ինչպես նաև օպերացիան կատարելու հակացուցմունքների պակասությունը:

Ակտը գրվում է յերկու օրինակից, վորոնցից յուրաքանչյուրը պետք է հաստատվի հանձնաժողովի անդամների ստորագրությամբ: Ակտի մեկ օրինակը տրվում է հղի կնոջ ձեռքը ներկայացնելու համար վորոշ (ըստ ցուցակի, Առողժողկոմի կողմից սահմանված) բժշկական 'ստացիոնար հիմնարկին, վորտեղ պետք է կատարվի աբորտը, մյուս օրինակը պետք է մնա հանձնաժողովի գործերում:

Նույն կարգով ակտ է կազմվում աբորտը մերժելու դեպքում:

9. Աբորտի օպերացիան կարող է կատարվել բժշկական սահմանված ցուցմունքներով՝ բացառապես հիվանդանոցներում կամ ծննդաբերական տներում: Հղի կնոջ մոտ աբորտի թույլատվության ակտի բացակայության դեպքում, վորը պետք է տրված լինի համապատասխան բժշկական հանձնաժողովի կողմից, բժշկական հիմնարկը, վորտեղ ուղարկված է հղի կինը, իրավունք չունի աբորտի կատարելը մերժելու:

10. Աբորտները կատարվում են վճարով: Վճարի

չափը սահմանվում է միութենական հանրապետու-
թյան Առժողկոմատների կողմից:

11. Աբորտի յուրաքանչյուր օպերացիայի համար կազմվում է, ըստ ընդհանուր կանոնների, հիվանդության պատմություն և, բացի դրանից, յուրաքանչյուր օպերացիա գրանցվում է հատուկ ժուրնալի մեջ, որի ձևը սահմանում է ԽՍՀՄ-ի Առժողկոմատը:

Բժշկական հանձնաժողովի կողմից տրված աբորտի թույլտվության ակտը պետք է պահվի բուժող հիմնարկում, որը կատարում է աբորտը, հիվանդության պատմության հետ միասին:

12. Վոչ լրիվ աբորտով հղի կանայք (հիվանդանոցից դուրս սկսված) ընդունվում են բացառապես հիվանդանոցներում կամ դրա համար հատկացված հատուկ բուժհաստատություններում: Վոչ լրիվ աբորտները դոկումենտացիայի չեն յենթարկվում հիվանդության պատմության և ժուրնալի գրանցումների մեջ:

Վոչ լրիվ աբորտով հղի կնոջ հղիությունն ընդհատելու արտաքին միջամտման ցուցանիշներ ունեցող դեպքերում. հղի կնոջն ընդունող բժիշկը ճշտությամբ պետք է նրա հիվանդության պատմության մեջ գրի կնոջ ստատուսը և հայտնի այդ դեպքի մասին դատախազությանը:

13. Երկրային (մարզային) առբաժնի վարիչը և Առժողկոմատները լիակատար պատասխանատվություն են կրում բժշկական հանձնաժողովների ճիշտ աշխատանքի համար՝ ըստ ներկա կանոնադրության:

*Բժշկական հանձնաժողովի անդամները սահմանված բժշկական ցուցմունքների բացակայության դեպքում աբորտներ թույլատրելու համար յենթարկվում են քրեական պատժի, որ նախատեսված է ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թվի հունիսի 27-ի որոշման յերկրորդ հոդվածով:*

ԽՍՀ Միության Առողջապահության Ժողովրդական Կոմիսար՝ Գ. ԿԱՄԻՆՍԿԻ

## ԲԺՇԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ (ԱԲՈՐՏԻ) ՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՌԹԻՎ

A 4225

*Աբորտի առթիվ բժշկական ցուցմունքներն են հանդիսանում.—*

1. *Սրտի և արյունատար անոթների ծանր և կայուն օրգանական հիվանդությունները. էնդոկարդիտները սրտի լեզվակների անատոմիական հիվանդությամբ, աորտի լեզվակների անատոմիական հիվանդությամբ և սրտի մկանունքների հիվանդությունն անբավարար արյան շրջանառության դեպքերում (ուռուցքներ, լճացած լյարդ, ցիանոզ, շնչարգելություն, և կայուն գիպերտոնիա, անկախ հղիությունից)։*

2. *Երիկամունքների բորբոքման դեգեներատիվ և կարծրացող փոփոխությունների կայուն ձևեր և նրանց ֆունկցիաների սահմանափակմամբ։*

3. *Երիկամների նեֆրոլիտիազիս (ռենտգենով սահմանված)։*

4. *Թոքախտի բաց ձևեր, ինչպես նաև թոքերի և լանջաթաղանթի փակ թոքախտային փոփոխությունները կայուն ինտոքսիկացիաների հետ միասին։*

5. *Միզատար ճանապարհների որովայնամաշկի, փորոտիքի, ոսկորների, հոդերի, կոկորդի թոքախտ։*

6. *Լյարդի խրոնիկական պարենխիմատոզային*



ՀՍՍՌ ԳԻՏ... ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

հիվանդություն՝ ֆունկցիաների արտահայտված խանգարումով:

7. Բազեդովի հիվանդություն՝ սրտաանոթային սիստեմի արտահայտված պակասությամբ, կամ այլ կայուն ինտոքսիկացիաներով:

8. Չարորակ արյան պակասություն (բիրմերյան ձև) և հղի կանանց չարորակ սակավարյունություն):

9. Լեյկոզներ (սպիտակարյունություն):

10. Հիվանդներ, վորոնք տառապում են կամ տառապել են չարորակ ուռուցքներով:

11. Ընկնավորություն — հաստատված բուժհիմնարկի կողմից:

12. Տեսողության նյարդի ատրոֆիաներ կամ նեվրիտներ, վորոնք առաջացել են հղիության հետևանքով, կամ ծայրամասային անոթային սիստեմի հիվանդություն:

13. Ցեղջերաթաղանթի ծանր հիվանդացում, որգանիզմի հյուծման հետևանքով, կամ էնդոկրինյան քայքայում, վորոնք առաջացել են հղիության հետևանքով (որինակ, գլիպտոֆին–կերատիտ, կերատոկոնուս):

14. Կոնքի նեղմումը 7,5 սմ և ցած խակական կոնյուգատով՝ կոնքի զգալի ձևափոխմամբ (դեֆորմացիայով) զանազան ծագումի, ինչպես նաև հեչտոցի զգալի սպիավոր փոփոխումները, վորոնք խանգարում են ծննդաբերությանը՝ ծնելու բնական ճանապարհների միջոցներով:

15. Աբորտը թույլատրվում է, յեթե մայրը, հայրը կամ յերեխաներից մեկն ունեցել են կամ ունեն

հետևյալ հիվանդություններից մեկն ու մեկը, վորը կարող է ժառանգաբար անցնել՝ գեմոֆիլիա, ապուշություն, գենուինական ընկնավորություն, շիզոֆրենիայի կամ մանյակային դեպրեսսիվ պսիխոզի ծանր ձևերը, վորոնք յենթարկվել են հիվանդանոցային բուժման. աչքի ժառանգական ծանր հիվանդություններ, վորոնք տանում են դեպի կուրություն. ժառանգական խուլություն ու համրություն. Նյարդային սիստեմի ժառանգական զարգացող սիստեմային հիվանդություններ: Մկանունքային զարգացող ատրոֆիա, ժառանգական ատաքսիա:

## Հղիության արհեստական ընդհատման (աբորտի) ոպերացիայի հակացուցմունքները.

Արհեստական աբորտի ոպերացիայի հակացուցմունքներ հանդիսանում են.

1. Սուր և վոչ սուր գոնորեա (սուսանակ):

2. Սուր և վոչ սուր վուլվովագինիտներ և բարտոլինիտներ յուրաքանչյուր ծագումի ինչպես նաև ֆուրունկուլներ սեռային որգանների վրա:

3. Երոզիաներ արգանդի պարանոցից ժահրաթորումների առկայությամբ:

4. Կցուկներում և նրանց շրջապատող վորովայնային հյուսվածքում բորբոքվող պրոցեսների առկայությունը:

5. Բոլոր տեղական թարախակալված և ընդհանուր սուր ինֆեկցիոն հիվանդություններ:

Ծանոթություն.— Աբորտի համար հակացուցմունքի առկայության դեպքում բժշկական

*հանձնաժողովը պետք է նրան զուգադրի հիմնական հիվանդության հետ, վորի առթիվ յենթադրվում է կատարել աբորտը և վորոշի հարցը, մանրակրկիտ կշռադատելով, թե ինչն է լավ կնոջ առողջության համար՝ պահպանել հղիությունը, թե, ընդհատել նրան վորոշ ռիսկով:*

ԽՍՀ Միության Առողջապահության Ժողովըրդական Կոմիսար՝ Գ. ԿԱՄԻՆՍԿԻ

# Խ.Ս.Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

*1936 թվի հունիսի 27-ի № 65/1134 վորոշումը*

## Աբորտներն արգելելու, ծննդականների նյութական ոգնությունն ավելացնելու, բազմանդամ ընտանիքավորներին պետական ոգնություն սահմանելու, ծննդական տների, մանկամսուրների և մանկապարտեզների ցանցի ընդարձակման, ալիմենտները չվճարելու համար քրեական պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության պատիժն ուժեղացնելու և ամուսնալուծության որենսդրության մեջ մի քանի փոփոխություններ մտցնելու մասին

*Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը, վոր սկիզբ դրեց ամեն մի դասակարգային շահագործման վոչնչացման, դասակարգերի իսկ վոչնչացման, միաժամանակ սկիզբ դրեց նաև կնոջ կատարյալ ու վերջնական ազատագրման:*

*Աշխարհի վոչ մի յերկրում քաղաքական, հասարակական կյանքի բոլոր բնագավառներում ու ընտանեկան կենցաղում կինը չի ոգտվում այնպիսի լրիվ իրավահավասարությամբ, ինչպես ԽՍՀՄ-ում:*

*Աշխարհի վոչ մի յերկրում կինը, վորպես մայր ու քաղաքացուհի, վորի վրա ընկած է ծնելու և քաղաքացիներ դաստիարակելու մեծ ու պատասխանատու պարտականությունը, չի ոգտվում այնպիսի*

հարգանքով և որենքի պաշտպանությամբ, ինչպես ԽՍՀՄ-ում:

Սակայն քաղաքացիական պատերազմից ու զինված ինտերվենցիայից հետո առաջին տարիներին ավերված տնտեսական քայքայումը յերկրում և կանանց նախահեղափոխական եպոխայից ժառանգած կուլտուրական մակարդակի անբավարարությունը, թույլ չըտվին նրանց անմիջապես լիովին ոգտագործել որենքով տրամադրված իրավունքները և ապագայի համար առանց յերկյուղելու կատարել քաղաքացուհու ու մոր իրենց պարտականությունները, վորը պատասխանատու յեն իր յերեխաների ծննդի և սկզբնական դաստիարակման համար: Այդ առնչությամբ խորհրդային իշխանությունը 1920 թվի նոյեմբերի 18-ին կանանց համար թույլատրեց աբորտներ կատարել (հղիության արհեստական ընդմիջում), ինչպես գրում ե Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատը և Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատը, քանի վոր «անցյալի բարոյական մնացորդները և ներկայի տնտեսական ծանր պայմանները դեռևս հարկադրում են կանանց մի մասին՝ դիմել այդ օպերացիային» (Որենքների ժողովածու, 1920 թիվ № 90 հոդ. 471):

Լենինը դեռևս 1913 թվին գրել ե, վոր գիտակից բանվորները «անպայման թշնամի յեն նեոմալթուզականությանը, կուրացած ու յեսասեր մեշչանական զույգի համար այդ հոսանքին, վորը վախեցած շշընջում ե՝ —«աստված տա ինքներս մի կերպ պահվենք, իսկ յերեխաներ արդեն ավելի լավ ե չունենալ»:

Սակայն, ըմբոստանալով աբորտի, վորպես սոցիալական չարիքի դեմ, Լենինը բացահայտ կերպով անբավարար եր համարում նրա դեմ կռվելու համար միայն աբորտն արգելող որենքները։ Դեռ ավելին, նա մատնանշում եր, վոր կապիտալիզմի պայմաններում այդ որենքներն արտացոլում են միայն «տիրող դասակարգերի կեղծավորությունը»,— վորովհետև նրանք «չեն բուժում կապիտալիզմի ցավերը, այլ նրանց դարձնում են առանձնապես վատորակ, առանձնապես ծանր՝ ճնշված մասսաների համար»։ (16-րդ հատոր, եջ 498-499)։

Միայն սոցիալիզմի պայմաններում, ուր բացակայում ե մարդու շահագործումը մարդու կողմից և վորտեղ կինը հասարակության իրավահավասար անդամ ե, իսկ աշխատավորների նյութական բարեկեցության առաջադիմող բարձրացումը հասարակական զարգացման որենքն ե հանդիսանում, կարելի ե լուրջ կերպով դնել պայքարն աբորտի դեմ, այդ թվում նաև արգելիչ որենքների միջոցով։

Կապիտալիստական շահագործման վոչնչացումը ԽՍՀՄ-ում, աշխատավորների նյութական բարեկեցության աճը և քաղաքական ու կուլտուրական մակարդակի հսկայական աճը թույլ են տալիս դնել Առողջապահության Ժողկոմատի և Արդարադատության Ժողկոմատի 1920 թվի նոյեմբերի 18-ի վորոշման վերանայման հարցը։

Կանանց ու նրանց յերեխաների նյութական անհրաժեշտ ապահովումը, պետական ոգնությունը

*բազմանդամ ընտանիքներին, ծննդաբերական տների, մանկամսուրների ու մանկապարտեզների ցանցի առավելագույն զարգացումը, ամուսինների առանձին ապրելու դեպքում երեխայի հոր կողմից նրա պահպանման համար վճարման ենթակա գումարի մինիմումի օրենսդրական սահմանումը մի կողմից և աբորտների արգելումը մյուս կողմից, երեխաների պահպանման համար դատարանի վորոշած միջոցները չարամտորեն չվճարելու համար պատիժն ուժեղացնելու հետ միասին՝ ամուսնալուծության օրենսդրության մեջ մի քանի փոփոխություններ մտցնելով, ընտանիքին լավ դեպի ընտանեկան պարտականությունները թեթևվամտորեն վերաբերվելու դեմ պայքարելու նպատակով,— այդ են այն ուղիները, վորի վրա պետք կանգնել այս մեծ, ամբողջ ազգաբնակությանը շոշափող հարցը լուծելու համար: Այդ ուղղությամբ խորհրդային կառավարությունն ընդառաջում է աշխատավոր կանանց բազմաթիվ դիմումներին:*

*Շարադրվածի առնչությամբ և հաշվի առնելով նախագծի քննարկման ժամանակ քաղաքացիների կողմից արված վորոշ դիտողությունները, ԽՍՀ Միության Կենտգործկոմն ու Ժողկոմխորհը վորոշում են.*

## 1. Աբորտներն արգելելու մասին

1. *Աբորտների վնասակարությունը հաստատված լինելու առնչությամբ արգելել նրանց կատարումը, ինչպես հիվանդանոցներում և հատուկ բուժական հաստատություններում, նույնպես և բժիշկների տանն*

ու հղիների մասնավոր բնակարաններում: Աբորտներ կատարելը թույլատրել բացառապես այն դեպքերում, յերբ հղիության շարունակությունն սպառնալիք է ներկայացնում հղի կնոջ կյանքին կամ ծանր վնաս է սպառնում առողջությանը, նույնպես և ծնողների՝ ժառանգությամբ հաղորդվող ծանր հիվանդությունների առկայության դեպքում և միայն հիվանդանոցների ու ծննդաբերական տների պայմաններում:

2. Հիվանդանոցից դուրս կամ հիվանդանոցում, սակայն մատնանշած պայմանների խախտմամբ աբորտ կատարելու դեպքում քրեական պատիժ սահմանել աբորտ կատարող բժշկի համար՝ մի տարուց մինչև յերկու տարի բանտարկություն, հակասանիտարական պայմաններում կամ բժշկական հատուկ կրթություն չունեցողների կողմից աբորտներ կատարելու համար սահմանել քրեական պատիժ՝ յերեք տարուց ոչ պակաս բանտարկություն:

3. Կնոջն ստիպելու աբորտ կատարելու համար սահմանել քրեական պատիժ՝ բանտարկություն մինչև յերկու տարի:

4. Հղի կանանց նկատմամբ, որոնք աբորտ են կատարում խախտելով նշված արգելումը, սահմանել որպես քրեական պատիժ հասարակական պարսավանք, իսկ աբորտների արգելման օրենքը յերկրորդ անգամ խախտելու դեպքում՝ տուգանք մինչև 300 ռուբլի:

2. Պետության կողմից ծննդկաններին տրվող նյութական օգնությունը մեծացնելու և բազմանդամ ընտանիքներին պետական օգնություն սահմանելու մասին.

5. *Սոցիալական ապահովագրության օրգաններում ապահովագրված ինչպես բանվորուհի, այնպես էլ ծառայող ծննդկանների նյութական դրությունը բարելավելու նպատակով մեծացնել պետական սոցիալական ապահովագրման միջոցներից նորածինի խնամքի համար անհրաժեշտ առարկաներ ձեռք բերելու համար տրվող նպաստների չափերը՝* 32 *ռուբլուց մինչև* 45 *ռուբլի:*

6. *Ցերեկային կերակրելու համար մորը տրվող նպաստի չափն ամսական* 5 *ռուբլուց դարձնել* 10 *ռուբլի:*

7. *Չապահովագրված աշխատավոր կանանց՝ կոոպերատիվ արտելների և ձեռնարկությունների անդամների նկատմամբ սահմանել, որ նշված նպաստները տան փոխադարձ օգնության կոոպերատիվ դրամարկղները նույն հիմունքներով:*

8. *Բեկանել այն սահմանափակումը, որ սահմանված է ծառայող կանանց համար Աշխատանքի օրենքների օրենսգրքով (հոդված* 132*), նրանց հավասարեցնելով բանվորուհիներին արձակուրդի տևողության տեսակետից, որը տրվում է ծննդաբերությունից առաջ և հետո* (56 *օր ծննդաբերությունից առաջ և* 56 *օր ծննդաբերությունից հետո):*

9. *Քրեական պատիժ սահմանել կանանց հղիու-*

թյան պատճառով աշխատանքի ընդունելուց հրաժարվելու համար, նույն պատճառներով աշխատավարձն իջեցնելու համար, որենքում նախատեսված հղի կնոջ վերջին վեց ամիսների աշխատանքի հաշվով նախկին աշխատավարձի պարտադիր պահպանումը՝ միաժամանակ նրան ավելի հեշտ աշխատանքի փոխադրելով:

10. Վեց երեխա ունեցող բազմանդամ ընտանիքավոր մայրերի պետական նպաստը սահմանել տարեկան երկու հազար ռուբլի՝ յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդի ժամանակ՝ երեխայի ծննդյան որից սկսած հինգ տարվա ընթացքում, իսկ տաս երեխա ունեցող մայրերի համար յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան ժամանակ 5 հազար ռուբլի միանվագ պետական նպաստ և երկրորդ տարվանից՝ երեք հազար ռուբլի տարեկան նպաստ, վորը տրվում է երեխայի ծննդյան որվանից սկսած հետևյալ չորս տարիների ընթացքում, սույն հոդվածը տարածելով նաև այն ընտանիքների վրա, վորոնք որենքի հրատարակման մոմենտին կունենան համապատասխան քանակությամբ երեխաներ:

## 3. Ծննդաբերական տների ցանցի ընդլայնման մասին.

Հանձնարարել միութենական հանրապետությունների Առժողկոմատներին.

11. Քաղաքներում, արդյունաբերական և շրջանային կենտրոններում ապրող ծննդականներին հատուկ ծննդաբերական տներում, ծննդաբերական ոգնությամբ լրիվին ընդգրկելու նպատակով մինչև 1939 թ. հուն-

վարի 1-ը կառուցել և շահագործման մեջ դնել 11 հազար նոր ծննդաբերական մահճակալներ, որոնցից՝ 1936 թվի պլանով նախադծված 4,200 մահճակալների լրացուցիչ կերպով 2,000 մահճակալ,

1937 թվին 4,000 »»

1938 թվին 5,000 »»

12. Գյուղական վայրերում ծննդականներին ցույց տրվող ստացիոնար ծննդաբերական օգնությունը մեծացնելու նպատակով, կառուցել և շահագործման մեջ դնել 32 հազար ծննդաբերական մահճակալ, դրանցից պետական բյուջեյի հաշվին՝ 16 հազար մահճակալ՝ գյուղական հիվանդանոցներին կից ծննդաբերական բաժանմունքներում և 16 հազար մահճակալ կոլտնտեսային ծննդաբերական տներ կազմակերպելու միջոցով, դրանց կազմակերպման արժեքի 75 տոկոսն ի հաշիվ կոլտնտեսությունների և 25 տոկոսն ի հաշիվ պետական բյուջեյի:

Այդ թվում.

1936 թվի պլանով նախադծվածին լրացուցիչ կերպով 1936 թվին 4,3 հազար ծննդաբերական մահճակալներ գյուղական հիվանդանոցներին կից և հինգ հազար ծննդաբերական մահճակալներ կոլտնտեսային ծննդաբերական տներին կից,

հիվանդանոցներին կից 4,000 մահճակալ և կոլտնտեսային ծննդաբերական տներին կից 4,000 մահճակալ:

1937 թվին՝ հիվանդանոցներին կից 6.000 մահճակալ և կոլտնտեսային ծննդաբերական տներին կից—6,000 մահճակալ 1938 թվին՝ հի-

վանդանոցներին կից—6.000 և կոլտնտեսային ծննդաբերական տներին կից—6.000 մահճակալ:

13. Ծննդաբերական տների օգնությամբ չսպասարկվող ծննդականներին տանը մանկաբարձական օգնություն ապահովելու նպատակով մինչև 1939 թվի հունվարի 1-ը ծավալել 14 հազար 400 նոր մանկաբարձական կետեր, դրանցից՝

1936 թվին՝ 2,700 մանկաբարձական կետ գյուղում և 1,370 մանկաբարձուհի նոր կոլտնտեսային ծննդաբերական տներին կից:

1937 թվին՝ 5,000 մանկաբարձական կետ գյուղում և 2,00 մանկաբարձուհի նոր կոլտնտեսային ծննդաբերական տներին կից:

1938 թվին՝ 6,700 մանկաբարձական կետ գյուղում և 2,000 մանկաբարձուհի նոր կոլտնտեսային ծննդաբերական տներին կից:

## 4. Մանկամսուրների ցանցի ընդլայնման մասին.

14. Մինչև 1939 թվի հունվարի 1-ը կրկնապատկել քաղաքներում, խորհտնտեսություններում, բանչեններում և երկաթուղային տրանսպորտում երեխաների համար մսուրային մահճակալների գոյություն ունեցող ցանցը, դրանց ընդհանուր թիվը հասցնելով 800 հազար մահճակալի, կառուցելով և շահագործման մեջ դնելով՝

1936 թվի պլանով նախատեսված 34,000 մահճակալին լրացուցիչ կերպով

1936 թվին 100,000 նոր մահճակալ
1937 թվին 150,000 »» »»
1938 թվին 150,000 »» »»

---

Ընդամենը 400·000 »» »»

15. Գյուղական վայրերում մինչև 1939 թվի հունվարի 1-ը կրկնապատկել ինչպես մշտական, այնպես էլ սեզոնային կոլտնտեսային մանկամսուրների մսուրային մահճակալների գոյություն ունեցող ցանցը՝ մահճակալների թիվը մեծացնելով մշտական մանկամսուրներում՝ 500,000 և սեզոնային մանկամսուրներում չորս միլիոն մահճակալով, որից՝

1936 թվի պլանով նախադծված 70,000 մահճակալին լրացուցիչ կերպով կոլտնտեսային մշտական մանկամսուրներում՝

1936 թվին 100·000 մահճակալ
սեզոնային մանկամսուրներում 1936 թվին նախադըծված մեկ միլիոն մահճակալին լրացուցիչ կերպով 500,000 »»
1937 թվին մշտական կոլտնտեսային մանկամսուրներում 200,000 »»
սեզոնային մանկամսուրներում 1,500,000 »»
1938 թվին մշտական կոլտնտեսային մանկամսուրներում՝ 200·000 »»
սեզոնային մանկամսուրներում 2,000,000 »»

Նշված ցանցի ծավալման վերահսկողությունը

դնել միութենական հանրապետությունների Առողջժող-կոմատների և յերկրային, մարզային ու շրջանային գործադիր կոմիտեների վրա:

16. Քաղաքներում և արդյունաբերական վայրե-րում 1937 թվի հունվարի մեկից մանկամսուրների աշխատանքը կատարել յերկու հերթափոխությունով, որական 16 ժամ, ներառյալ նաև հանգստյան որերը:

17. Առաջարկել միութենական հանրապետություն-ների Առողջժողկոմատներին նոր բացվող հիմնարկու-թյուններն ապահովել համապատասխան կադրերով, միջին-բժշկական անձնակազմի պատրաստման համար 1936 թվի հատկացումների վրա լրացուցիչ կերպով ավելացնելով 15 միլիոն ռուբլի:

18. Առաջարկել միութենական հանրապետություն-ների առժողկոմատներին յերեք տարվա ընթացքում — մինչև 1939 թվի հունվարի մեկը լրացուցիչ կերպով կառուցել կաթի 800 նոր խոհանոց քաղաքներում ար-դյունաբերական և շրջանային կենտրոններում՝ մինչև յերեք տարեկան յերեխաներին սնելու համար, այդ խոհանոցներից մատակարարել — ընդգրկելով 1,5 միլիոն յերեխա և ծավալելով՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1936 թվին | 1-ին | կատեգորիայի | 30 | խոհանոց (յուրաքանչյուր խո-հանոց 83000 ռուբլի արժողությամբ) |
| | 2-րդ | » | 100 | » (յուրաքանչյուր խո-հանոցը 65000 ռուբլու արժողությամբ) |
| 1937 թվին | 1-ին | » | 70 | » |
| | 2-րդ | » | 200 | » |
| 1938 թվին | 1-ին | » | 100 | » |
| | 2-րդ | » | 300 | » |

5. Մանկապարտեզների ցանցի ընդլայնման մասին.

